Պարույր Սևակ

Անսպասելի փոթորիկ

Գեղեցիկ չէր, ես էլ գերված-տարված չէի:
Կար պաղ գինի միայն ու նույնքան պաղ զրույց:
Ո՛չ ես, ո՛չ էլ ինքը սիրահարված չէինք,
Ո՛չ էլ խոսում էինք հիմար սիրուց:
Հետո... ինչպես եղավ... ու տաքացա՛վ գինին,
Ու տաքացավ խո՛սքը, ու... տաքացա՛վ:
Ինչքան խմեցի ես՝ ասաց «անո՛ւշ լինի»,
Ինչքա՛ն խմեցի ես՝ այնքան գեղեցկացա՛վ,
Այնքա՛ն գեղեցկացավ, որ չեմ հիշում հիմա,
Թե մինչև այդ ինքը իր ինչի՞ն էր նման...
Հետո , երբ դուրս ելանք ,թվաց , թե նա
Շրջազգե՛ստ չի հագել, այլ՝ փոթորի՛կ:
Հետո... փոթորիկն այդ տեղափոխվեց իմ մեջ ,
Հետո... փոթորիկն այդ փոխանցեցի նրան՝
Իմ մատների միջով - միջոցով իր թևի:
Հետո... փոթորիկն այդ մեզ երկուսիս քշեց,
Թավալգլոր տարավ չգիտեմ ուր,
Բանալիով ջարդեց ինչ-որ մի դուռ,
Եվ քանի որ արդեն հոգնած էր շատ՝
Փոթորիկը պառկեց մահճակալին,
Հսկա՛ փոթորիկը նեղլի՛կ մահճակալին,

Որպեսզի մի փոքրը հանգստանա...
Հանգստացավ, երբ որ... առավոտն էր բացվում...
Հիմա, կանգնած այդ նույն մահճակալի դիմաց,
Փոթորկի հետքերն եմ զննում ու տնտրղում
Ո՛չ անկողնու վրա, այլ իմ ներսո՞ւմ: Հիմա
Մինչև ծունկըս խրված ինքըս իմ մեջ՝
Ինչպես ծառը հողում,
Ես ճոճվում եմ տեղում:
Մեջըս սկսում են արմատ ձգել
Եվ ծառայի՛ն մտքեր, ծառի՛ մտքեր:
Ու ես ծառի նման չեմ կարենում լքել
Այն տեղն, ուր տնկված եմ:
Հիմա ինչպե՞ս պոկեմ,
Ինչպե՞ս ինքըս պոկեմ ինձ ինձանից
Ու վեր կենամ գնամ.
Քայլող ծառի՞ նման...

30, 31.X.1965թ.
Չանախչի